

ՆՈՐԻՆ ՎԵՀԱՓԱՌՈՒԹԵԱՆ ՏՆՕՐԻՆՈՒԹԻՒՆՆԵՐԻՑ.

Դիւանի գրութիւն պ. Սերգէյ Գասպարեանի անու-
նով, որով առաջարկուեց, համաձայն իւր գրաւոր խոստ-
ման, գաղթական հայերի օգտին իւր ընկերների շրջանում
հանգանակութիւն անել և գոյացած գրամը փոխադրել
«. Էջմիածին յանուն Նորին Ա. Օծութեան: 1 փետր.:
թ. 199:

Դիւանի գրութիւն Մշոյ Տ. Եղիշէ քահանայ Տէր-
Պարսամեանի անունով, որով յանձնարարուեց ուղարկել
«. Էջմիածին իւր մօտ գտնուած ձեռագիրները, արծա-
թեղէնը և ոսկեղէնը, նաև եկեղեցական զգեստները, եթէ
իրեն հարկաւոր չեն այդ զգեստները: 3 փետր.: թ. 221:

Նորին Արքութեան մակագրութեամբ յանձնուեց Սի-
նօղին Յարիցինի Հայ Մանուկների Ընկերութեան փոխա-
դրած յօգուտ հայ որբերի մի հազար (1000) ուրլին:
4 փետրուարի: թ. 223:

Նորին Արքութեան մակագրութեամբ յանձնուեց Սի-
նօղին Տաշքենաի հոգևոր հովիւ Տ. Մարկոս քահանայ
Տէր Մկրտչեանի փոխադրած յօգուտ հայ որբերի հա-
րիւր երեսուն և ութն ուրբ. 90 կ. (138 ու. 90 կոպ.):
4 փետրուարի: թ. 224:

Նորին Արքութեան մակագրութիւն Վանայ Բերդակ
գիւղացի Ասատուր Յովհաննիսեանի խնդրի վրայ. «Պա-
տուիրում ենք Սինօղին Մեր անցեալ 1916 թ. սեպտեմ-
բերի 23-ի թ. 2023 մակագրութեամբ Սինօղ յանձնած
մի հարիւր (100) ուրլին յանձնել խնդրատու Ասատուր
Յովհաննիսեանին Ա. Էջմիածնի Եղրայրական Օգնութեան
Յանձնաժողովի միջոցով, պատուիրելով զանձապահին նա-
խօրօք ստանալ Յովհաննիսեանից հաւատարմագիրս: 4
փետրուարի: թ. 225:

Կոնդակ Շամախու Հայոց թեմի Առաջնորդ Տ. Բազրատ եպիսկոպոսի անունով, որով վերահասու տատելով Բազուի Ե. Թադէոս և Բարդուղիմէոս եկեղեցու բազում բացուած Հայոց եկեղեցական-ծխական դպրոցը՝ յայտնուեց նոյն եկեղեցու նորոգ կաղմուած Հոգարարձու թեան՝ Նորին Ս. Օծու թեան օրհնութիւնը, 4 փետրուարի, թ. 226:

Դիւանի գրութիւն Յարիցիւնի Հայ Մանուկների Ընկերութեան անունով, որով յայտնուեց Նորին Ս. Օծու թեան օրհնութիւնն ու գոհունակութիւնը Հայ գաղթական որբերի օգտին մի հազար (1000) ուրլի դրամ ուղարկելու առթիւ, 4 փետրուարի, թ. 227:

Դիւանի գրութիւն Աղէքսանդրապօլի քաղաքապետի Կարապետ Կամսարականի անունով, որով, ի պատասխան նորա գրութեան, յայտնուեց, որ ազգային-եկեղեցական թանգարանը պէտք է լինի միմիայն Ս. Էջմիածնում, որը հանդիսանում է Հայութեան միակ ազգային մեծ կենտրոնը, 4 փետրուարի, թ. 228:

Նորին Սրբութեան մակաղրութեամբ յանձնուեց Սինօզին Աբբեմանի Տ. Երեմիա քահանայ Ապրիլեանի փոխադրած Հայ գաղթականների օգտին երեք հարիւր (300) ուրլին, 6 փետրուարի, թ. 229:

Դիւանի շրջաբերական գրութիւն յանուն Ռուսահայոց թեմակալ Առաջնորդների անունով, որով, Նորին Ս. Օծու թեան կարգադրութեան համաձայն, առաջադրուեց յայտնել իրենց ստորադաս բոլոր հոգևոր պաշտօնեաներին և հասաատութիւններին, որ հեռագրական բոլոր դիմումները, յանուն Հայրապետական Դիւանի, կմնան անպատասխան, եթէ հետը պատասխան-վճար չլինի, առնուազն 15 բառի, 9 փետրուարի, թ. 243—248:

Նորին Սրբութեան մակաղրութեամբ յանձնուեց Սինօզին Արմաւրի արական զիմնադիայի Հայ և ուսու աշակերտների Հայ գերիների օգտին փոխադրած հարիւրութն (108) ուրլին, 10 փետրուարի, թ. 250:

Գիււանի գրութիւն Արմաւրի Տ. Գէորգ քահանայ Սէֆէրեանի անունով, որով յանձնարարուեց յայտնել տեղական արական գիմնադիայի հայ և ռուս աշակերտներին նորին Սրբութեան օրհնութիւնն ու զօհունակութիւնը նոցա հայ գաղթականական որբերի օգտին զբաժներ ուղարկելու համար: 13 փետրուարի, թ. 252:

Նորին Սրբութեան մակազրութեամբ յանձնուեց Սինօզին հետեւեալ դումարները՝

ա) Ամերիկայի Սէն-Լուի քաղաքից յօգուտ գաղթականների շորս հարիւր եօթանասուն շորս (474) ռուբլին: 15 փետրուարի, թ. 253:

բ) «Արմենիա» թերթի խնրագիր պ. Մկրտիչ Փորթուգալեանի միջոցով Բրազիլիայի հայերից յօգուտ գաղթական օրիորդների երկու հազար ինն հարիւր երեք ռուբ. 05 կ. (2903 ռ. 05 կ.): 15 փետրուարի, թ. 254:

գ) Ամերիկայի Հայոց թեմի Առաջնորդ Տ. Արսէն Տ. վարդապետ Վեհունու միջոցով զանազան քաղաքներից յօգուտ գաղթականների և կամաւորների մի հազար վեց հարիւր տասն և ինն ռ. 50 կ. (1619 ռ. 50 կ.): 15 փետրուարի, թ. 255:

դ) Ամերիկայի Րիչմոնդ քաղաքի Օժանդակ Մարմնի փոխադրած յօգուտ գաղթականների երկու հարիւր երկու ռուբ. 30 կ. (202 ռ. 30 կ.): 15 փետրուարի, թ. 256:

ե) Արմաւրի հայ կաղմակերպութիւնների փոխադրած յօգուտ գաղթականների տասն և մի հազար (11000) ռ.: 15 փետրուարի, թ. 257:

զ) Արմաւրի Տ. Գէորգ քահանայ Սէֆէրեանի միջոցով արական գիմնադիայի աշակերտների կաղմակերպած երեկոյթից յօգուտ գաղթականների մի հազար ինն հարիւր (1900) ռուբլին: 15 փետրուարի, թ. 258:

Կոնդակ օրհնութեան և զօհունակութեան Արմաւրի հայ ժողովրդի անունով Տաճկահայ գաղթականներին դրամական նուէրներով օգնելու համար: 15 փետր., թ. 259:

Իււանի գրութիւն Աղէքսանդրապօլի փոխանորդ Տ. Արտակ վարդապետի անունով, որով յայտնուեց նորին Վեհափառութեան օրհնութիւնն ու զոհունակութիւնը՝ վիճակի զիւղերում գպրոցներ բանալու գործում նորա թափած ջանքերի համար: 16 փետրուարի, թ. 270:

Իււանի գրութիւն Շամախու Հայոց թեմի առաջնորդ Տ. Բազրատ եպիսկոպոսի անունով, որով նորին Վեհափառութեան կարգադրութեան համաձայն, յանձնարարուեց ստանալ հանգուցեալ կարապետ Լալայեանի ժառանգներէց, ըստ նոցա գրաւոր յայտարարութեան, նոցա հօր կտակած մի հարիւր հազար (100,000) ուրլին և Երևանի Իրամատների մէկի միջոցով փոխադրել յանուն նորին Ս. Օծութեան: 16 փետրուարի, թ. 271:

Կոնդակ օրհնութեան և զոհունակութեան վերին-Ազուլիս զիւղի առևտրական տան հիմնադիրներ՝ պ. պ. Սարգիս Թեանեան Հախնազարեանի, Աղէքսանդր Իրիգորեան Արիանի և Աւետիս Առաքելեան ներսէսեանցի անունով վերոյիշեալ զիւղի ծխական գպրոցի պահպանութեան համար տասն հազար (1000) ուրլի նուիրաբերելու առթիւ: 17 փետրուարի, թ. 272:

Կոնդակ օրհնութեան և զոհունակութեան վերին-Ազուլիսցի պ. Յովհաննէս կարապետեան Մարգարեանցի անունով նոյն զիւղի ծխական գպրոցի պահպանութեան համար տասն հազար (10000) ուրլի նուիրաբերելու համար: 17 փետրուարի, թ. 273:

Նորին Սրբութեան մակադրութեամբ յանձնարարուեց Սինօզին Ամերիկայից Սարգիս Նախոյեանի փոխադրած երեք հարիւր քսան և մի (321) ուրլին, յանձնած Սինօզին այս տարուայ յունուարի 10-ի № 35 մակադրութեամբ, Ս. Էջմիածնի Եղբայրական Օգնութեան Յանձնաժողովի միջոցով յանձնել վանի Իոմ զիւղացի Փոխան Նախոյեանին: 20 փետրուարի, թ. 282:

Նորին Սրբութեան մակադրութեամբ յանձնուեց Սի-

Նօղին Ամերիկայից Նիւպրիթէյնի Իջմէի Միացեալ Ուսումնասիրաց Ընկերութեան փոխադրած յօգուտ գաղթականների երեք հարիւր երեսուն և երեք ուրբ. 30 կ. (333 ա. 30 կ.): 20 փետրուարի, թ. 283:

Նօրին Սրբութեան մակադրութեամբ յանձնուեց Սինօղին Լուզանսկից Պետրոս Մանուշակեանի փոխադրած յօգուտ գաղթականների հինգ հարիւր (500) ուրլին: 20 փետրուարի, թ. 284:

Կոնդակ օրհնութեան և գոհունակութեան Ռուբէն և Եւզինէո Սարգսեանների, Յարութիւն Պոպովեանի և Աննա Շորշորեանի անունով իրենց հանգուցեալ մօր յիշատակը յաւերժացնելու համար գաղթականների օգտին նուիրաբերած տասն հազար (10000) ուրբ. գումարի աւթիւ: 20 փետրուարի, թ. 285:

Նօրին Սրբութեան մակադրութեամբ յանձնուեց Սինօղին Կիւի Խորէն աւագ քահանայ Մնացականեանի յօգուտ գաղթականների փոխադրած վեց հարիւր եօթանասուն և չորս ուրբ. 50 կ. (674 ա. 50 կ.): 22 փետր.: թ. 287:

Նօրին Սրբութեան մակադրութեամբ յանձնուեց Սինօղին Ամերիկայից Բուէնոս-Այրեսի Հայ Կրօնական Ընկերութեան փոխադրած յօգուտ գաղթականների երկու հազար չորս հարիւր քսան և չորս ուրբ. 25 կ. (2424 ա. 25 կ.): 22 փետրուարի, թ. 288:

Նօրին Սրբութեան մակադրութեամբ յանձնուեց Սինօղին Ղզըլ-Արվատի երեսփոխան Անտոն Աւետեանի փոխադրած յօգուտ գաղթականների չորս հարիւր ութն ուրբ. 51 կ. (408 ա. 51 կ.): որ գոյացել է երեկոյթից: 22 փետրուարի, թ. 289:

Դիւանի գրութիւն Ղարաբաղի թեմի ժամ. կառավարիչ Տ. Վահան Տ. վարդապետի անունով, որով յայտնուեց, որ, ըստ եզրակացութեան Ս. Էջմիածնի կենտրոնական Ուսումնարանական Յանձնաժողովի, Վարդաշէնի

Ճիսական դպրոցի աւագ ուսուցիչ Սարգիս Տէր-Սարգսեանի անունը հանուեց ընդհանուր ուսուցչական ցանկից, որպէս անհամապատասխան անձի այդ կոչման, միաժամանակ յանձնարարուեց՝ 1) ազատ համարել Տէր-Սարգսեանին Վարդաշէնի դպրոցի աւագ ուսուցչութեան պաշտօնից այժմէն իսկ, տալով նորա ամսական բոճիկը մինչև վճուի նորան յայտնելու ամսուայ վերջը, և յաւելեալ մի ամսական ևս և 2) ազդարարել Վարդաշէնի ճիսական հոգաբարձութեան, որ մինչև հոգևոր բարձր իշխանութիւնից շատանան իրենց որոշման հաստատութիւնը՝ չեն կարող դպրոցից ուսուցիչ արձակելու վճիռ դնել և գործադրել: 22 փետրուարի, թ. 300:

Նորին Սրբութեան մակազրութեամբ յանձնուեց Սինսոզին Արմաւրի Գէորգ քահանայ Սէֆէրեանի փոխադրած յօգուտ գաղթականների (եղբ. Սէֆէրեանների կողմից) երեք հարիւր յիսուն (350) ուերլին: 23 փետրուարի, թ. 301:

Իււանի գրութիւն պ. կարապետ Ափինեանի անունով, որով վերադարձնելով նորա կազմած 1918 թ. օրացոյցը, յայտնուեց, որ նորին Սրբութեան կողմից արգել չկայ եկեղեցական մաս, տպագրել և հրատարակել այն: 24 փետրուարի, թ. 304:

Նորին Սրբութեան մակազրութեամբ պատուիրուեց Սինսոզին տալ «Շողակաթ» դիտական ժողովածուի խմբագրութեան մի հազար հինգ հարիւր (1500) ուերլի՝ ժողովածուի Բ. հատորը հրատարակելու համար: 24 փետր., թ. 312:

Իււանի գրութիւն Տրապիզոնի հայ հոգևոր իշխանութեան ներկայացուցիչ Տ. Մեսրոպ աւագ քահանայ Սեւեանի անունով, որով յայտնուեց նորին սրբութեան կողմից հաստատուած Ս. Էջմիածնի եղբայրական Օգնութեան Յանձնաժողովի հետեւեալ որոշումները՝ ա) Տրապիզոնում պատասպարուած որբերին ընդունել Յանձնաժողովիս հովանաւորութեան տակ և հարկաւոր կարգադրու-

Թիւնները անել նոցա խնամելու համար: բ) բաց անել Տրապիզոնում Յանձնաժողովի հովանաւորութեան ներքոյ գաղթականական դպրոցներ: գ) Ս. Ստեփաննոս եկեղեցու անհրաժեշտ կարկատանները և նորոգութիւնները կատարել առանց յապաղումի: դ) Տ. Մեսրոպ աւագ քահանայ Մելեանի ուժիկն աւելացնել մի հարիւր ուրլով: Ի նկատի ունենալով կեանքի ներկայ թանգութիւնը և ներկայացուցչութեան հետ կապուած յաւելեալ ծախքերը և ե) խնդրել Տ. Մեսրոպ աւագ քահանայ Մելեանին, որ մանրամասն տնտեսականի և բարոյականի հաշիւ ներկայացնէ Յանձնաժողովին: 25 փետրուարի, Թ. 324:

Դիւանի գրութիւն գնդապետ Կերստիշի անունով, որով յայտնուեց նորին Ս. Օժութեան օրհնութիւնն ու զօհունակութիւնը՝ Կարնոյ հայոց եկեղեցու մէջ եղած եկեղեցական իրերը պահպանելու համար: 25 փետրուարի, Թ. 325:

Դիւանի գրութիւն Մայր Աթոռի Դ. Հոգևոր ձեմարանի Տեսչի անունով, որով յայտնուեց, որ նորին Վեհափառութեան կողմից հաստատուած են քահանայացուներին քննող Յանձնաժողովի անդամութեան պաշտօնում պ. պ. Աւետիք Տէր-Պօղոսեան, Լևոն Դեանջեցեան, Բահաթուր Բահաթրեան, Սենեքերիմ Տէր-Յակովբեան, Վահան Նաւասարդեան և Արշակ Տէր-Յովսէփեան: 1 մարտի, Թ. 333:

Նորին Սրբութեան մակազրութեամբ յանձնուեց Սինօզին նոր-նախիջևտնի Տ. Մկրտիչ աւագ քահանայ Տէր-Յակովբեանի փոխադրած յօգուտ գաղթականների երկու հարիւր (200) ուրլի: 3 մարտի, Թ. 342:

Դիւանի գրութիւն Վիլեամօի անունով, որով յայտնուեց նորին Սրբութեան օրհնութիւնը՝ Անգլիական Կառավարութեան ջանքերով հրատարակած հայկական կուսութեան կապոյտ գլխից մի հատոր նորին Վեհափառութեան ուղարկելու համար: 3 մարտի, Թ. 355:

Նորին Սրբութեան մակադրութեամբ յանձնուեց Սինոզին Աստրախանի թրմի Անուխովայի Շմաւոն քահ. Գարաքեհեանի փոխադրած յօգուտ գաղթականների քսան և վեց (26) ուրլին: 4 մարտի, թ. 358:

Իււանի շրջաբերական գրութիւններ Ռուսաստանոց թեմակալ Առաջնորդների անունով, որոնցով յանձնարարուեց կարգադրել ժողովել իրենց թեմերի եկեղեցիներից աւելորդ հնօտի եկեղեցական զգեստները և ուղարել ս. էջմիածին՝ բաժանելու գիւղական չքաւոր եկեղեցիներին: 4 մարտի, թ. 360—365:

Նորին Սրբութեան մակադրութեամբ յանձնելով Սինոզին Տ. Մատթէոս եպիսկոպոսի ներկայացրած հինգ հարիւր եօթանասուն ութ ուր. 68 կոպ., (578 ո. 68 կ.), պատուիրուեց մուծել մտից մատեան ի հաշիւ Ա. Ղուկասեանի կտակադումարի: 6 մարտի, թ. 367:

Նորին Սրբութեան մակադրութեամբ յանձնուեց Սինոզին Մողղոկի Խորէն քահանայ Շահինեանի փոխադրած յօգուտ գաղթականների իննսուն ութ (98) ուրլին: 6 մարտի, թ. 368:

Նորին Սրբութեան մակադրութիւն Աղէքսանդրապօլ քաղաքի բնակիչ Մկրտիչ Յովհաննիսեան Ամիրջանեանցի խնդրադրի վրայ, Վաւաքելով սորա հետ Աղէքսանդրապօլցի Մկրտիչ Յովհաննէսեան Ամիրջանեանցի կողմից նուիրաբերած երեսուն հազար (30000) ուրլի Աղէքսանդրապօլի քաղաքային Դրամատան № 581 տոմօր (Ս. Աստուածածին եկեղեցու բազում ծխական երկդասեան դպրոց բանալու համար), պատուիրում ենք Սինոզիդ պահպանել այն մինչև նորա ցանկացած դպրոցի բացումը և Մեր առ այդ լինելիք կարգադրութիւնը, կցում է նաև Ամիրջանեանցի նուիրաբերութեամբ բացուելիք դպրոցի բացման մասին Մեզ մատուցած յայտարարութեան վաւերական պատճէնը: 7 մարտի, թ. 383:

Շրջաբերական Կոնդակներ Ռուսաստանոց թեմակալ

Առաջնորդների անունով, որոնցով յանձնարարուեց հնազանդուել Ռուսական նոր կառավարութեան և ըստ ամենայնի աջակցութիւն և օժանդակութիւն ցոյց տալ նրան: 8 մարտի, թ. 384—389:

Կոնդակ Շամախու Հայոց թեմի Առաջնորդ Տ. Բազրատ եպիսկոպոսի և պ. պ. Առտուածատուր Վաչեանի, Արշակ Պարոնեանի, Ստեփան թաղիանոսեանի, Միքայէլ Բաղդատեանի, Բազրատ Շխեանի և Ստեփան Այվազեանի անունով, որոնք կարգուեցան Զանգուի առւել շինութեան Յանձնաժողովի անդամութեան պաշտօնում Տ. Բազրատ եպիսկոպոսի նախադասութեամբ: 10 մարտի, թ. 391:

Իիւանի շրջաբերական գրութիւններ, Ռուսաստանոց թեմակալ առաջնորդների անունով, որոնցով յանձնարարուեց եկեղեցիներում կայսեր և կայսերական ընտանիքի անդամների անունները շիջատակել: 10 մարտի, թ. 392—297:

Նորին Արքութեան մակազրութեամբ յանձնուեց Սիւոզիին եզիպատոսի Հայոց առաջնորդարանից փոխադրած յօգուտ հայ դաղթականների շորս հարիւր իննսուն և եօթն ուրբ. 80 կ. (497 ա. 80 կ.): 11 մարտի, թ. 400:

Իիւանի գրութիւն Մայր Աթոռի Տպարանի վարչութեան անունով, որով ուղարկուեց տպագրելու ս. Էջմիածնի առաջիկայ 1916 թ. օրացոյցը: 12 մարտի, թ. 408:

Իիւանի գրութիւն Դէորգեակ քաղաքի ծխականների անունով, որով յայտնուեց, որ իրենց քահանայացուն, որպէս քաղաքի քահանայացու, պէտք է ունենայ պահանջուած կրթական ցենզ: 12 մարտի, թ. 412:

Նորին Արքութեան մակազրութեամբ յանձնուեց Մայր Աթոռի տպարանի վարչութեան ծաւա կզգու Սուրբայա քաղաքից Զոհրապ-Մեսրոպ ընկերութեան յօգուտ տպարանի փոխադրած քսան և ութ (28) ուրլին: 14 մարտի, թ. 421:

Նորին Արքութեան մակազրութեամբ յանձնուեց Սիւ-

նօղին Շուշուց Եսայի Մուսայէլեանի կողմից փոխադրած յօգուտ գաղթականների տասն (10) ռուբլին: 14 մարտի, թ. 422.

Կոնգակ Սինօղի անունով, որով ուղարկուով Եզիպտոսի առաջնորդ Տ. Թորգոմ եպիսկոպոսի Հնդկաստանում հանդանակած և փոխադրած ութսուն և վեց հազար վեց հարիւր (86600) ռուբլին, պատուիրուեց մուտք գրել մտից մատեանում յիշեալ դումարը, յանուն Նորին Սրբութեան, և պահել մինչև որ Տ. Թորգոմ եպիսկոպոսը կփոխադրէ իւր հանդանակած ամբողջ դումարը, որի մասին Նորին Ս. Օծութիւնը կանէ կարեւոր կարգադրութիւն: 14 մարտի, թ. 423:

Կոնգակ Սինօղի անունով, որով ուղարկելով հանդուցեալ կարապետ Լալայեանի ժառանգների փոխադրած մի հարիւր հազար (100000) ռուբլին, համաձայն հանդուցեալի կտակի, առաջադրուեց մուտք գրել մտից մատեանում և աւելացնել այդ դումարը Մայր Աթոռի Գ. Հոգևոր ձեմարանի անձեռնմխելի դումարների վերայ: 14 մարտի, թ. 424:

Դիւանի գրութիւն Մայր Տաճարի լուսարարապետ Տ. Անանիա արքեպիսկոպոսի անունով, որով ուղարկուեց Տաճարում գործածելու համար, Բազուից պ. Գրիգոր Պոպովի նուիրարեւած 5 արշին թաւշեայ կտորը: 16 մարտի, թ. 430:

Դիւանի գրութիւն պ. Գրիգոր Պոպովի անունով, որով յայտնուեց Նորին Սրբութեան օրհնութիւնը՝ նորա Մայր Տաճարի գործածութեան համար նուիրարեւած 5 արշին թաւշեայ կտորի առթիւ: 16 մարտի, թ. 431:

Նորին Սրբութեան մակադրութեամբ պատուիրուեց Սինօղին կարգադրել մարտի 1-ից տալ Մայր Աթոռի մատենադարանի գրապահ Սարգիս Թոփալեանին ռոճիկ ամսական 80 ռուբլի: 17 մարտի, թ. 439:

Նորին Սրբութեան մակադրութեամբ յանձնուեց Սի-

նօղին Ախալցխայի Հոգևոր Կառավարութեան յօգուտ
գաղթականների փոխադրած տասն և վեց ուր. 14 կոպ.
(16 ո. 14 կ.): 21 մարտի, թ. 457:

Կոնգակ Վրաստանի առաջնորդ Տ Մխիթար Եպիս-
կոպոսի, Շամախու առաջնորդ Տ. Բազրատ Եպիսկոպոսի
և ս. Էջմիածնի Սինօղի անդամ Տ. Գէորգ վարդապետի
անունով որով յանձնարարուեց Եղևորուել Տփլիս և
շնորհաւորել Ռուսաստանի ժամանակաւոր Կառավարու-
թեան կողմից Կովկաս ուղարկած ներկայացուցիչներին:
22 մարտի, թ. 462:

Նորին Սրբութեան մակազրութեամբ յանձնուեց Սի-
նօղին Սարատովից Մկրտիչ Հասրաթեանի յօգուտ Մայր
Աթոռի փոխադրած քսան և հինգ (25) ուրլին: 23 մարտի,
թ. 466:

Նորին Սրբութեան մակազրութեամբ յանձնուեց Սի-
նօղին Աքքերմանի Երեմիա քահանայ Ապրիլեանի յօգուտ
գաղթականների փոխադրած մի հարիւր (100) ուրլին:
23 մարտի, թ. 467:

Դիւանի գրութիւն Երևանի փոխ-թեմակալ Տ. Խորէն
Եպիսկոպոսի անունով որով յանձնարարուեց գաղթական
բանիմաց անձանց խորհրդակցութիւն կազմել և միջոցներ
մշակել գաղթականների պսակալուծութիւնների առաջն առ-
նելու համար և խորհրդակցութեան մասին զեկուցում
ներկայացնել նորին Սրբութեան: 24 մարտի, թ. 480:

Դիւանի գրութիւն Մայր Աթոռի Տպարանի վարչու-
թեան անունով որով համաձայն նորին Սրբութեան կար-
գազրութեան, յանձնարարուեց ուղարկել Ղարսի փոխա-
նորդ Տ. Իսահակ վարդապետին՝ Խնուոի հայոց եկեղեցու
գործածութեան համար՝ 1) երկու շարական, 2) մի տտենի
ժամագիրք, 3) երկու փոքր ժամագիրք, 4) մի տօնացոյց,
5) մի խորհրդատետր, 6) մի իւղաբերից աւետարան և
7) մի ճաշոց գիրք: 24 մարտի, թ. 481:

Նորին Սրբութեան մակազրութեամբ յանձնուեց Սի-

Նօղին Արմաւիրցի Մագթադինէ Թորոսեանի յօգուտ որ-
բերի ներկայացրած յիսուն (50) ուրբլին: 25 մարտի,
թ. 486:

Կոնդակ Սինօղի անունով, որով ծանուցուեց, որ Բես-
սարարիայի կոնտրատորիայի նախանդամ Տ. Մեսրոպ վար-
դապետ Մաքսուդեանը թեմի առաջնորդ հանգուցեալ Տ.
Ներսիս արքեպիսկոպոսի թաղման օրը զշ. (Երեքշաբթի)
հակառակ հայոց եկեղեցու օրէնքների ու կարգերի ինքնա-
ղլուի կերպով պատարագ է մատուցել, առաջադրուեց
արձակել նորան այդ պաշտօնից, յետ կոչելով Մ. Աթու-
իակ նորա տեղը կարգել, մինչև նոր առաջնորդի կարգու-
մը: Ն. Նախիջևանի Ս. Խաչ վանքի վանահայր Տ. Մուշէ
վարդապետին, թողնելով վերջնիս վրայ նաև վանքի վա-
նահայրութեան պաշտօնը: 27 մարտի, թ. 493:

Դիւանի գրութիւն օ. Էջմիածնի Եղբայրական Օգնու-
թեան Յանձնաժողովի Տ. նախագահի անունով, որով յանձ-
նարարուեց, համաձայն նորին Սրբութեան բարեհաճ կար-
գադրութեան, փոխադրել Աղէքսանդրապօլի «Տարոն-Տու-
րուբերան» Ընկերութեան, որպէս նպաստ երեք հազար
(3000) ուրբլի: 28 մարտի, թ. 503:

Նորին Սրբութեան մակագրութեամբ պատուիրուեց
Սինօղին տալ Դպրոցական Դրամագլխի տոկոսներից Արաս-
տանի մեծ և փոքր Պամաճ և ըն զիւղերի համար դպրոց-
ներ կառուցանող Յանձնաժողովին միանուազ նպաստ երեք
հարիւր (300) ուրբլի: 29 մարտի, թ. 52:

Դիւանի շքաբերական գրութիւններ Ռուսահայոց
թեմակալ առաջնորդների անունով, որով, համաձայն նորին
Սրբութեան կարգադրութեան, յանձնարարուեց կազմել և
մինչև առաջիկայ մայիսի 25-ը ներկայացնել իրենց թեմերի
հայոց եկեղեցական-ծիսական շքաւոր դպրոցների ցուցակը
և նոցա նպաստելու շափը, որպէս զի հնար լինի այժմենից
որոշել առաջիկայ ուսումնական տարուայ Դպրոցական
Դրամագլխի տոկոսներից նոցա նպաստ տալու խնդիրը:
29 մարտի, թ. թ. 525—530: